Զով գիշերը նպաստել էր քարաւանին բաւական ճանապարհ կտրել: Մեր ձիաների սրարշաւ ընթացքով մենք հազիւ կարողացանք հասնել նրան այն ժամանակ, երբ նա արդէն հասել էր Անգղ գետի ափի մօտ եւ այնտեղ, կանաչազարդ մարգադաշտի վրայ, պատրաստւում էր իջեւանել:

Քարաւանապետի ծառաները շտապով ցած էին բերում ջորիների կռնակից բեռները եւ կարգով դարսում էին միմեանց վրայ: Նրանց շարքերը բարձր ամբարտակների ձեւ էին ստանում: Յետոյ, երբ բոլոր գրաստների բեռները ցած էին դրած, վեր առին նրանց համետները, քորոցներով քորեցին, թիմաեցին, քրտինքը ցամաքեցրին եւ ապա, հրացաններով զինուած, տարան ջորիները իջեւանից հեռու մերձակայ տեղերում արածացնելու: Ճանապարհորդները, իւրաքանչիւրը իր ընկերի հետ, խուբ-խումբ տեղաւորուեցան գետի ափերի մօտ, իրանց շուրջը հաւաքելով իրանց իրեղէնները: Կապերտները եւ գորգերը տարածեցին փափուկ խոտերի վրայ, անկողինները բաց արին, մութաքաները դրեցին եւ մի առանձին բաւականութեամբ նստեցին: Ոմանք գետի ափի մօտ լոցման ծէսն էին կատարում, որ յետոյ նամազ անեն: Ոմանք այդ ծէսը կատարել, վերջացրել էին եւ, բաց երկնքի ներքոյ, կանաչ խոտերի վրայ չոքած, նամազ էին անում: Ոմանք նամազը վերջացրել էին իրանց տեղերում նստած, «տերողորմեայի» հատիկները դարձնելով, նրանց թոի համեմատ, լռութեամբ աւելորդ աղօթքներ էին կարդում, մինչեւ ծառաները ընթրիք կը պատրաստէին: Մահմեդականը ճիշտ է իր կրօնական պահանջների մէջ եւ ճանապարհորդութեան ժամանակ: Այդ ի նկատի առնելով, քարաւանի պետը, թէեւ քրիստոնեայ էր, բայց ճանապարհորդութեան ընթացքը այնպէս էր յարմարեցրել, որ նրանց միջոց տայ իրանց պարտաւորութիւնները իրանց ժամանակին կատարելու, եւ այդ շատ հաճոյական էր մահմեդականներին, որոնք միշտ քարաւանի մեծամասնութիւնն էին կազմում:

Ծալովի երկար լապտերները, որ քարշ էին ընկած երկաթեայ ցցերից, լոսաւորում էին ճանապարհորդների ընթրիքի սեղանը եւ նրանց ուրախ դէմքերը, որոնց վրայ յոգնութիւն ամենեւին չէր նշմարւում: Արդէն զանազան տեղերում խարոյկներ էին վառւում, մեծ եւ փոքր կաթսաները եփ էին գալիս, եւ փլաւի, իւղի, տապակած մսի հոտը բուրում էր օդի մէջ՝ ախորժակ բաց անող անուշահոտութեամբ:

Ոմանք ընթրիքը վերջացրել էին եւ, թիկն տուած բարձերին, թեք էին ընկած եւ խորին գոհունակութեամբ ծխում էին նարգիլէ: Սեւամորթ ստրուկը կրակի վրայ պատրաստում էր փրփրացող ղահուէն: Այդ բոլորը իմ վրայ այն տպաւորութիւնն էր գործում, կարծես թէ այդ ամբողջ քարաւանը ուխ-